

Խ Ո Ն Ե Ր

Posted on December 15, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 14 Դեկտեմբեր 2020

- Ա -

Յարգելի հայրենակից,

Վերջին մէկ ամսուան ահաւոր իրադարձութիւնները, որոնք խայտառակ եւ ամօթալի աւարտ ունեցան, հետեւեալ մտորումներու եւ խոհերու յանգեցան:

Խոր յարգանքս ու երախտագիտութիւնս յայտնելով մեր բանակի **հաւատարիմ** անդամներուն եւ ոգեկոչելով հերոսաբար ինկած հայորդիներու յիշատակը, յոյս ունիմ որ եղածը բացարձակ պարտութիւն պէտք չէ որակել՝ հաւատալով որ ԿԱՅԾԸ տակաւին չէ մարած:

- Արցախի խնդրի կարգաւորում եւ վերաբնակեցում:
- Սիւնիքի պաշտպանութիւն. կայ մասնատումի վտանգ:
- Խորթ տարրերէ եւ փողոցային մշակոյթով ու բառապաշարով հրապարակ իջած ամբոխավարութեան չեզոքացում:
- «17+X» եր եւ Վ.Մ.-երու հեռացում քաղաքական հարթակէն:
- Համախոհական իշխանութեան ստեղծում:
- Օտարամուտ եւ վնասակար շնորհավճարներու կամ պարգեւավճարներու ետին կեցած մուր ուժերու բացայայտում եւ չեզոքացում:
- Իսկական եւ երկարատեւ հայ-ռուսական վստահելի յարաբերութեան մշակում:
- Արեւմտեան աշխարհի կառոյցներու հետ յարաբերութեանց վերագնահատում եւ վերարժեւորում:
- Հայոց լեզուի (յատկապէս այժմ խօսուող արեւելահայերէնի) մաքրագտում եւ փրկութիւն:
- Իսկապէս կարող եւ փորձառու հայ քաղաքական գործիչներու եւ դիւանագետներու ընդգրկում:
- Կուսակցամոլութենէ հրաժարում եւ այդ ախտէն վարակուածներու ի սպառ հեռացում:
- Չգօնութիւն, երբ դրամ կ'առաջարկուի «դուրսէն»:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

- Օրուան հրամայականն է Հայաստանեայց Եկեղեցւոյ ԱՆՅԱՊԱՂ ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄԸ եւ վերադարձը Վազգէնեան շրջանին:

- Կ'առաջարկեմ հետևել այն երբ ձեր մեջ կ'ապրի ձեր հաւատացած Բրիտանոսը՝ Աստուծոյ Որդին, ապա հաստ պարանը քաշեցէք եւ յարձակեցէք Տաճարի մուտքին առեւտուրը ընողներուն, լուսնայափոխներուն, շրջիկ նպարավաճառներուն եւ անոնց նմաններուն վրայ, ապա պոռացէ՛ք. «Դո՛ւրս կորսուեցէք Հօրս Տունէն», բայց կիրթ հասարակութեան նման եւ «ոչ մէկ ծաղիկ ճգմելու» նախանձախնդրութեամբ, դիմեցէ՛ք մեր հաւատի կեդրոնը/ները եւ խաչը բարձրացուցած պահանջեցէ՛ք մեծ անարդարութեամբ Լուսաւորչի գահը յափշտակած անձին ու իր [դրածներուն ԱՆՅԱՊԱՂ չքովիլը](#): Չմոռնաք նոյնը ընել նաեւ Գիւմրիի մէջ, Արցախ-Գանձասարի մէջ, ՀԲԸՄ-ի Կեդրոնին մէջ (ԱՄՆ), ՀՅԴ, ՀՀԿ, «Բարգաւաճ-մարգաւաճ» եւ նման կազմակերպութիւններու մէջ:

- Նկատի ունենալով սփիւռքի տարածքին ՀՅԴ-ի բազմամեայ փորձը եւ կրթական ու մշակութային ասպարեզներու մէջ արձանագրած ակնյայտ յաջողութիւնները, ՀՅԴ-ի նոր սերունդն ու առողջ տարրերը նոյնպէս պէտք է հարցականի տակ դնեն իրենց դեկլարութեան քաղաքականութիւնը, վերարժեւորեն եւ «փրկեն» հայկական այս կուսակցութիւնն ու իր զանազան մասնաճիւղերը:

Մաքրեցէք ՄԵՐ ՄԵԾ ՏՈՒՆԸ, որուն նայեցանք դարերով ու ներշնչուեցանք դարերով:

- Բ -

Քիչ մըն ալ Փաշինեանին եւ իր արբանեակներուն մասին

Մեր ժողովուրդը ուսամբարձ բերաւ Ն.Փ.-ն: Մեր ակնկալութիւնները այնքան համահունչ էին ազատութիւն, ժողովրդավարութիւն, արժանապատիւ կեանք երագող մեր ազգին ցանկութիւններուն, որ մենք ալ խանդավառուեցանք, բայց կարճ ատեն մը ետք Ն.Փ.-ի կուռքը, որ կը կարծէինք թէ կրանիթեայ էր, կամաց կամաց վերածուեցաւ տուֆի, փայտի, գածի (*ճիւփսիս*) եւ ծովափի աւազէ շինուած արձանի...

- Ան եղաւ անվճռական, տատամսոտ, շատախօս, բայց բան չըսող:

- Աջին ու ձախին փորձեց ցոյց տալ իր լեզուագիտութիւնը՝ անգլերէն, ֆրանսերէն... Ռուսերէն խօսիլը չեմ լսած որ գաղափար մը կազմեմ: Հայերէնն ալ **փայլուն բան մը չէր** (ուրիշ որակաւորում չեմ ուզեր տալ, այսքանը բաւարար է):

- Երբե՛ք չկրցաւ մասնագետ, փորձառու, քաղաքականութեան մէջ հասունցած ու թրծուած մարդիկ հաւաքել իր շուրջ:

- Երբե՛ք չլսեց իրմէ շատ աւելի փորձառու, «աշխարհ տեսած» բայց չապականած սրտցաւ մարդոց, ուր մնաց որ զանոնք իր շուրջ հաւաքէր:

- Չկրցաւ ըմբռնել Ռուսաստանի եւ Արեւմուտքի առաւելութիւններն ու այս երկուքին միջեւ ծաւալած հակամարտութիւնը՝ յոյսը չեմ գիտեր ի՞նչ գերբնական ուժերու վրայ դնելով:

– Փորձառու դարձաւ ներքին հակասութիւնները պարտկելու, ծածկելու եւ իր հաւատաւոր ժողովուրդին աչքին փոշի ցանելու մէջ:

– Միայն Ն.Փ.-ն մեղադրելը անարդարութիւն է. ան ծնունդն էր իր նման մտածող հոծ, երազատես, մեծամիտ, «մենք գիտենք ինչ ենք անում»ական բազմութեան մը, որ ամբոխի վերածուեցաւ:

– Կը ցաւիմ իր համար, կ'ափսոսամ համակրելի եւ աշխատասեր ու աւելի գիտակից կնոջ՝ Աննային:

– Կը մեղքնամ ու սրտի ցաւով կը նշեմ, որ շատ խեղճացաւ, ընկճուեցաւ, նախորդներուն սխալներուն դառն պտուղը ի՛նք քաղեց եւ մեզ ալ սեղանակից դարձուց: Չիմացաւ ե՛րբ փետուրով եւ ե՛րբ *ֆալսիկայով* ու մտրակով պետք էր կառավարել երկիրը: Ինչո՞ւ, որովհետեւ չիմացաւ իր կարողութիւններուն սահմանափակ ըլլալը:

ՄԵՂՔ ԵՂԱՆ ՄԵՐ ՔԱԶԱՐԻ ՏՂԱՔԸ. ԻՆՉԵ՛Ր ՊԻՏԻ ԸՆԷԻՆ ԱՆՈՆՔ:

Ի վերջոյ՝ Հայոց աշխարհին մի նոր մաքրութիւն է պետք, եթէ մեր աշխարհը մնայ...

Կը նկատեմ թէ շատերս, ես ալ ներառեալ, պետք եղածէն աւելի կարեւորութիւն տուինք հաչապահեաններուն (չեմ փափաքիր «աջ+պահ»ի հետ կապել խնդրոյ առարկայ ամբարտաւանին կրած մականունը. Իսկական եւ իմ ճանչցած Աջապահեաններուն չի՛ պատկանիր ինք): Ի զուր տեղը զայրացած իր մասին կամ իր դէմ կ'արտայայտուինք. մարդը անկէ աւելի՛ ուժ կ'առնէ, աւելի յամառ կը դառնայ, աւելի անզուսպ արտայայտութիւններ կ'ունենայ եւ կը նմանի այն երախային, որ ընկերներուն հետ վէճի ժամանակ կը ճչայ. «Լա՛ւ կ'ընեմ կոր»: Թեւեր չտանք իրեն:

Comments



Վահե – 2020-12-16 02:01:11

Վարչապետ Փաշինեանին նկարագրին եւ կենցաղին վերագրուած ածականներուն շնորհիւ եր որ տասը տարիներ առաջ բանտարկուած եւ բանտին մէջ խոշտանգումի ենթարկուած լրագրողը, որուն իր ատենին անդրադարձաւ այս կայքէջը; Ժողովրդական ընտրութեամբ լրագրողը հասաւ երկրին քաղաքակն բարձարագոյն աթոռին: Բայց իր վարչապետութեան յանգեցաւ աւելի քան երկու տասնեակ տարիներու երկրին կեղեքումին անխուսափելի ծանր իրողութիւնը: Եւ պատմութեան դաժան տնօրինումով, նոյն այդ կենցաղային նկարագրութիւնը վերածուեցաւ վերոյիշեալ մեկնաբանութեան: